ՔԱՂ.ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ԿԱՅԱՑԱԾ 30.08.2011 Թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Նիստին ներկա էին Նոյեմբերյան քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմը, քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների տնօրենները, հիմնարկների աշխատակիցները և Նոյեմբերյան համայնքի բնակիչներ:

Նիստը վարեց Նոյեմբերյանի քաղաքապետ Վանուշ Ամիրաղյանը:

Օրակարգ

1. Սեփական եկամուտների վերաբերյալ հաղորդումներ
2. Կատարված աշխատանքների մասին հաղորդումներ
3. Զոհված ազատամարտիկների անվամբ հուշակոթող կառուցելու նպատակով մտքերի փոխանակում
4. Նոյեմբերյանի թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզների ՀՈԱԿ վերակազմավորման մասին
5. ,, Վարձատրվող հասարակական աշխատանքներ,, ծրագրի դադարեցման մասին

1. *Սեփական եկամուտների վերաբերյալ հաղորդումներ*

/զեկուցող քաղաքապետ Վ.Ամիրաղյան/

Համայնքի ղեկավարը մանրամասն ներկայացրեց սեփական եկամուտների հետ կապված հարցի շուրջ պարզաբանումներ: Նա նշեց, որ սեփական եկամուտները մեծ նշանակություն ունեն համայնքի բյուջեի ձևավորման հարցում և մեր համայնքի համար կարևորագույն խնդիրները լուծվում են հենց դրանց միջոցով: Նշեց նաև, որ հարկերի հավաքագրման տոկոսները բարձր են և ուրախացնող: Ներկայացրեց յուրաքանչյուր հարկատեսակ և հարկերի կատարման տոկոսային հարաբերությունները:

Այնուամենայնիվ նա խնդրեց ներկաներին և քաղաքի ազգաբնակչությանն էլ ավելի ակտիվ լինել իրենց իսկ հարկային պարտավորությունների կատարման հարցում:

2. *Կատարված աշխատանքների մասին հաղորդումներ*

/զեկուցող քաղաքապետ Վ.Ամիրաղյան/

Քաղաքապետը ներկաներին տեղեկացրեց քաղաքում կատարվող շինարարական աշխատանքների մասին: Ներկայացրեց Նոյեմբերյան քաղաքի Դպրոցականների փողոցի մի հատվածի հիմնանորզման մասին, որը ֆինանսավորվել է պետական բյուջեի կողմից և պլանավորված է հիմնանորոգումը մինչև Կամոյի փողոցի հետ հատման կետը:

Նշեց, որ բազմաբնակարան շենքերի տանիքները վերանորոգման ենթակա են և դրանց համար ևս հատկացված է գումար:

Քաղաքի լուսավորությունը համարվում է քաղաքի ամենակարևորագույն հարցերից մեկը: Քաղաքի կենտրոնական հատվածը արդեն իսկ ապահովված է գիշերային լուսավորությամբ, իսկ ծայրամասերում այդ հարցը նույնպես կլուծվի մոտ ապագայում:

3. *Զոհված ազատամարտիկների անվամբ հուշակոթող կառուցելու նպատակով մտքերի փոխանակում*

/զեկուցող քաղաքապետ Վ.Ամիրաղյան/

Նա նշեց, որ կարևորագույն հարցերից մեկն էլ զոհված ազատամարտիկների անվամբ հուշակոթող կառուցելն է:

Նաև հորդորեց ժողովրդին ակտիվորեն մասնակցել հուշակոթողի կառուցման վայրի ընտրմանը: Տեղեկացրեց, որ հուշակոթող կառուցելու նպատակով կազմակերպվելու է հանգանակություն, որից գոյացած գումարը ամբողջությամբ կօգտագործվի հուշակոթողի կառուցման համար:

4. Նոյեմբերյանի թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզների ՀՈԱԿ վերակազմավորման մասին

/զեկուցող քաղաքապետ Վ.Ամիրաղյան/

Համայնքի ղեկավարը ներկաներին իրազեկեց Նոյեմբերյանի թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզների որպես ՀՈԱԿ վերակազմավորման մասին: Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված է ՀՈԱԿ-ի կանոնադրությունները և որ մնացած գործընթացը ընթացքի մեջ է:

5. „ Վարձատրվող հասարակական աշխատանքներ„ ծրագրի դադարեցման մասին

/զեկուցող քաղաքապետ Վ.Ամիրաղյան/

„Վարձատրվող հասարակական աշխատանքներ„ ծրագիրը դադարեցվել է, որը և դժվարացնում է քաղաքում իրականացվող աշխատանքների բարձր որակով կատարելը: Նշեց, որ խնդրանքով դիմել են կառավարություն ծրագիրը վերականգնելու համար:

Միաժամանակ նա քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների տնօրեններին հանձնարարեց յուրաքանչյուրին իրենց իրավասության սահմաններում նախապատրաստել իրենց ֆինանսական պահանջները 2012 թ համար բյուջեում ներառելու նպատակով:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՄԻՆԵ ԱՄԻՐԱՂՅԱՆ